



## ԱՆՈՒՉ ԹԱՍԱՎՅԱՆ

### Ժամանակը մոտեցավ հրաժեշտի կանգառին...

Երեկ ամեն ինչ այլ էր՝ աշխարհը խաղաղ էր, համենայն դեպս հոգին էր խաղաղ: Նոր օրը տակնուվրա արեց ամեն ինչ: Ընդամենը մի հեռախոսազանգ՝ հիվանդ է... Հիվանդ չէր, համենայն դեպս ոչ երեկ, ոչ դրան նախորդող օրերին. առողջ էր, լի էր կյանքով ու նորանոր, անընդհատ փոփոխվող, խմբագրվող ծրագրերով: Միրում էր կյանքը, կյանքից առավել՝ գիրքը: Հիմա հիվանդ է... Ոչ ինքն էր հավատում իրականությանը, ոչ երեխաներն ու հարազատները, որոնցից շատերն էլ չգիտեին այսօրվա մասին. հպարտ է շահտ, հավատում է, որ մղձավանջ է, կանցնի. և՛ հավատում է, և՛ ոչ: Մի տեսակ հուսահատ բացվեց օրը: Բժիշկը եկավ-գնաց, ինչ –որ անհիմաստ բժշկական տերմիններ, դեղատոմսեր, խորհրդավոր հայացք ու բազմաթիվ օրինակներ այս ու այն մարդկանց մասին, ովքեր հաղթահարել են այ հենց ա՛յս հիվանդությունը: Բայց հայացքը խորհրդավոր... Ո՞վ պիտի ստուգեր բժշկի ասածը, այն էլ՝ այսօր... Բժիշկը լավ հոգեբան էր, հասկացավ ու խորհուրդ տվեց՝ հիվանդանոց:

Այսօր քայլերը տանում են հիվանդանոց, քայլերը դանդաղ են, փութկոտ, դժվար ու թեթև... Ինքն էլ չգիտի՝ տեղ-տեղ վազում է. պիտի հասնի արագ: Աշխարհը միանգամից բաժանվեց երկու մասի՝ դուրսը և հիվանդասենյակը, ուր շտապում են ոտքերը: Դուրսը ետ մղվեց, դարձավ երկրորդական: Կարևորն այս հարազատ հիվանդասենյակն է՝ աշխարհ կապող, իրար շաղկապող, իր մեջ իմաստավորող մի մարդու կյանք տվող հիվանդասենյակը, դրա համար էլ ոտքերն իրենից անկախ վազում են: Աստիճաններն անցան ու բացվեց հիվանդասենյակի դուռը: Պատուհանի գոգին փոքրիկ հուշանվեր. ճիշտ ժամանակին. ինչ-որ ծանոթ մեկը Երուսաղեմից բերել է սրբապատկեր. ոչ ավել,

ոչ պակաս՝ Հիսուսն է՝ Փրկիչը, կողքին՝ Տերունական աղոթքը: Գիրքն ու հավատքը միասին: Հիվանդ օրերին էլ ի՞նչ է պետք: Մի տեսակ լուսավոր թախիժ ավելացրեց նվերը. թունելի ծայրին լույս երևալու հույս:

Որքան էլ որ երկրորդական էր դարձել դրսի աշխարհը, բայց պիտի գնար, վաղն էլի գալու էր, վաղը կարևոր օր է: Հիվանդանոցից դուրս եկավ ու տուն գնաց: Երեկոն դժվար էր անցնում: Գիշերն ավելի դժվարացավ: Քուն չի մոտենում հոգնած աչքերին: Մթության մեջ աչքերը մի կերպ փակվեցին: Որքան էր քնել, չհասկացավ: Վեր թռավ քրտինքի մեջ կորած: Երազը ... հրաժեշտ... Երազում նորից ծանոթ հիվանդասենյակում է, կարևոր մարդու կողքին, բայց Նա չի ուզում կիսել իր սենյակը, ճանապարհում է, ավելին՝ հրաժեշտ է տալիս, գոռով դուրս է հանում հիվանդասենյակից: Միջանցքում նորից պտտվեց, Նա նայում էր՝ արդեն կարոտած, տխուր ու վերջին հրաժեշտի հայացքով: Հենց այդ հայացքից էլ արթնացավ: Փորձեց անցնել առօրյա գործերին, որ նորից հասնի հարազատ հիվանդասենյակ: Առավոտվա ժամը ինն էր: Ինքն էլ չհասկացավ, թե ինչից վախեցավ, երբ նայեց ժամացույցի սլաքներին: Այդ պահին չէր գիտակցում, որ տարիներ անց, ամեն օր սկանա նայելու է ժամացույցին ու սարսա: Հեռախոսը գնգաց ու խախտեց լռությունը: Չարագուշակ գանգը հաստատեց երազը: Ժամանակը մոտեցավ հրաժեշտի կանգառին: Հետո, օրեր ու տարիներ շարունակ սեփական հոգին կրծելով պիտի ապրի այնքան, մինչև մի օր, երբ արդեն ճերմակած մազերին կհավաքվեն տարիների փնջերը, և հուշերը կմիախառնվեն, կմիաձուլվեն իր հորինած կյանքին, կհանդիպեն նրանք՝ նա և ամենակարևոր Մարդը: